



Մ ՈՒՐՐԵ Յ ԱԿՈՐ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵՄ ԿԵՂԵՅԻ



ՅԵՏ ԾԱՆՈՒԵԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԿԻՐԱԿԻ

13 ՓԵՏՐՈՒԲԱՐ 2022

Կիրակնօրեայ Ընթերցումներ	Էջ 1
Ծանուցումներ	Էջ 2

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ (63.7-19)

Տիրոջ ողորմածութիւնը պիտի յիշեցնեմ, Տիրոջ մեծագործութիւնները պիտի փառաբանեմ. այն բոլորին համար որ Տէրը ըրաւ մեզի համար: Իսրայէլի տան դատաւորն ու բարերարը ի՛նքն է, որ իր ողորմութեամբ եւ արդարամտութեամբ այս բաները ըրաւ մեզի:

Տէրը ըսաւ. «Աստուծոյ իմ ժողովուրդս են, որդիներս են, ամօթով պիտի չձգեն զիս»։ Եւ գահնոնք փրկեց իրենց բոլոր նեղութիւններէն: Ո՛չ թէ պատգամաւոր մը կամ հրեշտակ մը, այլ Տէրը ի՛նք փրկեց զանոնք: Որովհետեւ կը սիրէր զանոնք եւ կը խնայէր անոնց, ինք անձամբ փրկեց. ոտքի կանգնեց եւ բարձրացուց զանոնք անցեալ բոլոր ժամանակներուն մէջ:

Բայց անոնք անհնազանդ գտնուեցան եւ իր սուրբ Հոգին տրամեցուցին. ուստի Տէրը թշնամացաւ եւ ինք պատերազմեցաւ անոնց դէմ:

Այն ատեն անոնք հին օրերը փնտռեցին, ըսելով. «Ո՛ւր է Մովսէսը, Տիրոջ ծառան. ո՛ւր է Տէրը որ ծովէն հանեց իր հօտին հովիւը. ո՛ւր է ան որ իր սուրբ Հոգին զրաւ իր ժողովուրդին մէջ. ան՝ որ իր աջով առաջնորդեց Մովսէսը եւ իր անունը յաւերժացնելու համար իր փառաւոր զօրութեամբ անոր առջեւ բացաւ ծովուն ջուրերը:

Ապա իր ժողովուրդը բացուած անդունդէն անցուց այնպէս դիւրին՝ ինչպէս ձի մը կը քայլէ չոր գետնին վրայէն կամ ինչպէս նախիրը կ'անցնի դաշտին մէջէն: Տիրոջ Հոգին իջած՝ կ'առաջնորդէր զանոնք: Այո՛, այդպէս առաջնորդեցիր քու ժողովուրդդ, քու անունդ փառաւորելու համար:

Արդ, նայէ՛ երկինքէն, քու սուրբ եւ փառաւոր բնակութենէդ, եւ տե՛ս. ինչո՞ւ ա՛լ չես հետաքրքրուիր մեզմով եւ զօրութիւնդ ցոյց չես տար. ո՛ւր մնաց քու գլխաւատ ողորմութիւնդ, որով կը ներէիր մեզի:

Չէ՞ որ մեր հայրն ես դուն: Նոյնիսկ եթէ Աբրահամ չի գիտեր մեզ եւ Յակոբ չի ճանչնար մեզ, բայց դուն մեր Հայրն ես, ո՛վ Տէր, փրկէ՛ մեզ, որովհետեւ մենք սկիզբէն ի վեր քեզի կը պատկանինք:

Ինչո՞ւ կը ձգես որ խոտորինք քու ճամբաներէդ, ո՛վ Տէր, ինչո՞ւ թոյլ կու տաս որ խուլ ըլլանք քու կանչիդ եւ քու երկիւղդ չունենանք: Վերադարձի՛ր, Տէ՛ր, քու ծառաներուդ սիրոյն. վերադարձի՛ր այն ժողովուրդին սիրոյն որ քու ժառանգութիւնդ պիտի ըլլայ:

Չըլլայ որ ընդմիշտ կորսնցնենք Սիրոնը, քու սուրբ լեռը. որովհետեւ ահա մեր թշնամիները առժամաբար տիրեցին մեզի, ոտնակոխ ըրին քու սրբարանդ, ու մենք եղանք առաջուկան նման, երբ տակաւին մեր Տէրը չէիր դուն, երբ դեռ քու անունդ չէինք կրեր»:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՏԻՄՈԹԷՈՍԻ ԳՐԱԾ ԵՐԿՐՈՐԳ ԵՄԱԿԵՆ (3.1-12)

Ա՛ա՛ եւս գիտցիր, թէ վերջին օրերուն դժուար ժամանակներ պիտի գան, որովհետեւ մարդիկ պիտի դառնան անձնասէր, դրամապաշտ, ամբարտաւան, հպարտ, հայհոյիչ, ծնողներուն անհնազանդ, ապերախտ, սրբութիւնները ոտնակոխող, տմարդի, անգուլթ, չարախօս, անհանդուրժող, դաժան, բարիին թշնամի, մատնիչ, անպատկառ, գոռոզ, եւ աւելի հեշտանքը սիրող՝ քան զԱստուած: Երեւութապէս աստուածապաշտ են անոնք, բայց խորքին մէջ չեն հաւատար աստուածպաշտութեան զօրութեան: Զգուշացի՛ր անոնցմէ: Անոնց մէջ կան նաեւ այնպիսիներ, որոնք տունէ տուն կը մտնեն եւ իրենցմով կը հրապուրեն մեղքերով ծանրաբեռնուած եւ զանազան ցանկութիւններէ բռնուած թեթեւբարոյ կիները, որոնք միշտ կ'ուզեն գիտնալ, բայց երբեք ճշմարիտ գիտութեան չեն հասնիր: Այնպէս ինչպէս Եանէս եւ Եամբրէս մոգերը Մովսէսի հակառակեցան, միտքով ապականած եւ հաւատքով սնանկ այս մարդիկն ալ ճշմարտութեան կը հակառակին: Բայց իրենց յաջողութիւնը երկար չի տեւեր, որովհետեւ իրենց անմտութիւնը շուտով յայտնի պիտի ըլլայ բոլորին, ճիշդ ինչպէս այն երկուքինը եղաւ:

Բայց դուն կ'առչած մնա իմ ուսուցումիս, կեանքի օրինակիս, յօժարութեանս, հաւատքիս, համբերատարութեանս, որոնք ցուցաբերեցի՝ նոյնիսկ

հալածանքներու եւ չարչարանքներու մէջ: Գիտես թէ ի՞նչ պատահեցաւ ինծի Անտիոքի, Իկոնիոնի եւ Լիստրայի մէջ. թէ ի՞նչպիսի հալածանքներ կրեցի, եւ այդ բոլորէն Տէրը զիս ազատեց: Նոյնպէս, բոլոր անոնք որոնք կ'ուզեն աստուածապաշտութեամբ Քրիստոս Յիսուսի միացած ապրիլ, անպայման հալածանքներու պիտի ենթարկուին:

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ
(6.22-38)**

Յաջորդ օր, ժողովուրդը՝ որ մնացած էր լիճին միւս կողմը, տեսաւ թէ հոն միայն մէկ նաւակ կար, որուն մէջ Յիսուսի աշակերտները մտան եւ առանձին գացին. իսկ Յիսուս աշակերտներուն հետ նաւակ չմտաւ: Յետոյ Տիբերիայէն ուրիշ նաւակներ ալ եկան հոն, ուր Յիսուս Աստուծոյ գոհութիւն տալով բազմացուցած էր հացը եւ տուած ժողովուրդին, որպէսզի ուտեն: Ժողովուրդը տեսնելով թէ Յիսուս հոն չէր, ոչ ալ իր աշակերտները, նաւակները առին եւ Կափառնաում եկան Յիսուսը փնտելու համար: Երբ զինք գտան լիճին միւս կողմը, հարցուցին. «Վարդապե՛տ, ե՞րբ եկար հոս»: Յիսուս անոնց պատասխանեց. «Կ'ըսեմ ձեզի, վստահաբար դուք զիս կը փնտռէք՝ ո՛չ թէ որովհետեւ հրաշքներ տեսաք, այլ որովհետեւ այդ հացէն կերաք եւ կշտացաք: Փոխանակ կորստական ուտելիքը փնտռելու, ջանացէք ապահովել այն կերակուրը որ յաւիտենական կեանքի մէջ կը մնայ: Այդ կերակուրը Մարդու Որդին պիտի տայ ձեզի, որովհետեւ Հայրն Աստուած իր հաւանութեան կնիքը դրաւ անոր վրայ»:

Անոնք հարցուցին. «Ի՞նչ ընենք, որ Աստուծոյ ուզածը կատարած ըլլանք»: Յիսուս անոնց պատասխանեց. «Աստուծոյ ուզած գործը այն է, որ հաւատաք անոր՝ որ ինք զրկեց»: Անոնք ըսին. «Ի՞նչ հրաշք պիտի գործես, որպէսզի տեսնենք եւ քեզի հաւատանք. ի՞նչ պիտի ընես: Մեր հայրերը մամանան կերան անապատին մէջ, ինչպէս գրուած է. «Անոնց երկինքէն հաց տուաւ ուտելու համար»: Յիսուս անոնց ըսաւ. «Ճշմարտութիւնը կ'ըսեմ ձեզի, թէ ինչ որ Մովսէս ձեզի տուաւ՝ երկինքէն իջած հացը չէր: Հայրս է որ ձեզի կու տայ երկինքէն իջած ճշմարիտ հացը: Որովհետեւ Աստուծոյ տուած հացը ան է՝ որ երկինքէն կ'իջնէ եւ կեանք կու տայ աշխարհին»: Անոնք ըսին. «Տէ՛ր, մի՛շտ տուր մեզի այդ հացը»:

Յիսուս ըսաւ անոնց. «Ես եմ կեանքի հացը: Ան որ ինծի կու գայ՝ բնաւ պիտի չանօթենայ եւ ան որ ինծի կը հաւատայ՝ երբեք պիտի չծարաւնայ: Բայց հիմա ըսի ձեզի, տեսաք ալ զիս, եւ տակաւին չէք հաւատար: Բոլոր անոնք որ Հայրը ինծի կու տայ՝ ինծի պիտի գան, եւ ես ինծի եկողը պիտի չմերժեմ. որովհետեւ ես երկինքէն իջայ՝ ո՛չ թէ իմ կամքս կատարելու, այլ կամքը անոր՝ որ զիս զրկեց»:

**ՀՈԳԵՀԱՆԳԱՏԵԱՆ
ՁԵՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԵՐՈՒ
ՆԱԽՕՐՕՔ ԿԱՏԱՐԵՃԷՔ ԿԱՊՈՒԷԼՈՎ
ԵԿԵՂԵՅՈՂ ԳՐԱՏԵՆԵԱԿ՝
514 331 5445 x202**

**Եկեղեցւոյս նստարաններուն վրայ
Ձեր հանգուցեալ սիրելիներուն
անունով ցուցանակ տեղադրելու
համար, կրնաք կապուիլ
եկեղեցւոյ գրասենեակ՝
514 331 5445 x202:**

**ԱՅԵԼԵՅԷ՛Ք ԵԿԵՂԵՅՈՂՍ
ԴԻՄԱՏԵՏՐԻ ԷՁԸ
ԵՒ ՁԵՐ ՀԱԽԱՆՈՒԹԻՒՆ ԵՎ ՏԵՅԵՅԷ
(like).
www.facebook.com/SourpHagopChurchMontreal
ԱՅԵԼԵՅԷ՛Ք ԱԿԵ
Ս. ՅԱԿՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՐ
ԵԿԵՂԵՅՈՂ ԿԱՔԷՁԸ՝
www.sourphagop.net**